ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, 098-04-80-46,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 նոյեմբերի 2013թվականի N 37-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ղեկավարվելով <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32 հոդվածով.

Թումանյան համայնքի 2013թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.Վարչական մասի եկամուտներում

1)<<ՀՀ կառավարության 2013թ. հունիսի 27-ի թիվ 661-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> 23.10.2013թ. թիվ 1165-Ն որոշման հավելված 2-ի հիման վրա և ՀՀ Լոռու մարզպետի 2013թ. հուլիսի 23-ի թիվ ԼՄ-59 որոշմամբ հաստատված <<Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին>> և համայնքի բյուջեից ֆինանսավորվող համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում առաջացող լրացուցիչ ծախսերի նպատակով հատկացվող նպատակային հատկացման /սուբվենցիայի/ փոխադարձ համաձայնությամբ պակասեցնել 14.8 հազար ՀՀ դրամով՝ 974.5 հազար դրամը փոխարինելով 959.7 հազար դրամով,

2)ավելացնել համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող այլ վճարներից եկամուտները 70.8 հազար դրամով, սահմանել այն 394.8 հազար դրամ,

3)ավելացնել վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները 90.0 հազար դրամով, սահմանել այն 100.0 հազար դրամ,

4)ավելացնել վարչական բյուջեի <<Պահուստային ֆոնդից>> ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերը 181.5 հազար դրամով:

2.Վարչական մասի ծախսերում

1)ավելացնել <<Պահուստային ֆոնդի>> 11.1.2 դասակարգման ծախսերը 131.0 հազար դրամով, սահմանել այն 183.5 հազար դրամ,

2)պակասեցնել <<Պահուստային ֆոնդը>> 11.1.2 դասակարգման ծախսերը 181.5 հազար դրամով, սահմանել այն 2.0 հազար դրամ և այն հատկացնել ֆոնդային բյուջեին,

3)պակասեցնել <<Կառավարման ապարատի>> 1.1.1 դասակարգման ծախսերի նախահաշվի <<Աշխատողներին աշխատավարձեր և հավելավճարներ>> /հոդված 4111/ նախատեսված ծախսերը 285.0 հազար դրամով, սահմանել այն 13971.9 հազար դրամ,

4)ավելացնել <<Արտադպրոցական դաստիարակության>> 9.5.1 դասակարգման համար նախատեսված դրամաշնորհը 300.0 հազար դրամով, սահմանել այն 2871.2 հազար դրամ:

3.Ֆոնդային մասի եկամուտներում

1)ավելացնել վարչական բյուջեի <<Պահուստային ֆոնդից>> ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերը 181.5 հազար դրամով,

2)ավելացնել Անշարժ գույքի իրացումից եկամուտը 39.8 հազար դրամով,

3)ավելացնել Հողի իրացումից եկամուտը 20.1 հազար դրամով:

4.Ֆոնդային մասի ծախսերում

1)ավելացնել <<Ճանապարհային տնտեսության>> 4.5.1 դասակարգման ծախսերը /հոդված 5112/ 476.0 հազար դրամով,

2)պակասեցնել <<Փողոցների լուսավորության>> 6.4.1 դասակարգման համար նախատեսված ծախսերը /հոդված 5112/ 234.6 հազար դրամով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ
6. ՌԱՄԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, 098-04-80-46,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 նոյեմբերի 2013թվականի N 38-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16 հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով և <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով.

1.Հաստատել Թումանյանի քաղաքային համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու 2013թ. հուլիսի 29-ի թիվ 29-Ա որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ
6. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Հավելված

Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու

2013թ. նոյեմբերի 8-ի թիվ 38 -Ա որոշման

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ,

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 10:

2.Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՌՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

h/h	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/
1	Համայնքի ղեկավար	1	198000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	130000
3	Աշխատակազմի քարտուղար	1	110000
4	Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ	1	105000
5	Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	1	65000
6	Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	1	65000
7	Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	1	65000
8	Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ	1	60000
	Տեխնիկական անձնակազմ		
9	Վարորդ /ծառայողական/	1	65000
10	Տեխաշխատող	1	59600
12	**Ընդամենը մեկ ամսում**	**10**	**922600**
13	Ընդամենը մեկ տարում	10	11071200

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 8:

2.Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

<<ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

h/h	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/
1	Տնօրեն	1	108000
2	Հաշվապահ	1	68000
3	Դաստիարակ	0.5	50000
4	Դաստիարակ	0.5	50000
5	Երաժիշտ-դաստիարակ	0.25	25000
6	Դայակ, դաստիարակի օգնական	1	59600
7	Խոհարար	1	59600
8	Դռնապան	1	59600
9	**Ընդամենը մեկ ամսում**	6.25	479800
10	**Ընդամենը մեկ տարում**	**6.25**	**5757600**

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 5:

2.Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

<<ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

h/h	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/
1	Տնօրեն	1	62000
2	Հաշվապահ	0.5	30000

3	Դաշնամուրի դասատու	1	59600
4	Դաշնամուրի դասատու	1	59600
5	Նկարչության դասատու	1	59600
6	Տեխաշխատող	1	59600
7	**Ընդամենը 1 ամսում**	5.5	330400
8	**Ընդամենը 1 տարում**	5.5	3964800

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 5:

2.Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

<<ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

h/h	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/
1	Տնօրեն	1	65000
2	Հաշվապահ	1	60000
3	Վարորդ /աղբահանության գծով/	1	59600
4	բանվոր	1	59600
5	Տեխաշխատող	1	59600
6	**Ընդամենը մեկ ամսում**	5	303800
7	Ընդամենը մեկ տարում	5	3645600

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, 098-04-80-46,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 նոյեմբերի 2013թվականի N 39-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014Թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72 հոդվածով.

Թումանյան համայնքի տարածքում 2014 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքերը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 դրամ

2)սույն կետի <<1>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա)201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10 000 դրամ,

բ) 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30 000 դրամ,

գ)1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ,

4)20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքրի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքնրի /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1)չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառայուցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքրի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ,

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլանող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործանառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի <<1>> ենթակետով սահմանցած դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործանառական

նշանակության փոփոխության մասով,
3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործնառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 1000 դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ,
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակեպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ:

5.Համայնքի տարածքում՝
1)բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ,
2)հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար
սահմանել՝150000դրամ:
3)խանութներում ,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական
տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝30 000 դրամ:
4)համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը տարվա համար սահմանել ՝ 50 000 դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝
1) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ,
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ,
3)բաղնիքների /սաունաների/ համար՝ 200 000 դրամ,
4)խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ,
5)շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ,
6)վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

7.Համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 500 դրամ:

8.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝
1) ալկոհոլային /սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանքի գովազդի համար՝ 1000 դրամ:
2)թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ,
3)այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ,
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համյանքի արխիվիվ փաստաթղերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 500 դրամ:

10. Համայնքի տարածքում մառոատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/

ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1000 դրամ:

11.Համայնքի տարածքում շինության կամ շինության արտաքին տեսքը փոփոխվող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառվարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 1000 դրամ:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 500 դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար յուրաքանչյուր մասնակցի համար՝ 500 դրամ:

14. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճար սահմանել՝

1)կենցաղային աղբի տեղափոխման վճար յուրաքանչյուր անձի համար՝ 100 դրամ,

2)ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա) ըստ ծավալի 1 խմ աղբի համար 1000 դրամ կամ՝

բ)ըստ զանգվածի 1 տոննա աղբի համար 3000 դրամ:

15.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման ու փոխադրման համար սահմանել սույն որոշման 14-րդ կետով նախատեսված հաշվարկվելիք դրույքաչափերի 20%-ի չափով:

16.Համայնքի տարածքում բոլոր տուրքերի և վճարների համար սահմանվում են միասնական դրույքաչափեր:

17.Տվյալ տարվա համար հաստատված տեղական տուրքի դրույքաչափերի փոփոխութուն չի կարող կատարվել:

18.Տեղական տուրքերը և վճարները վճարվում են Հայաստանի Հանրապետությունում՝ պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով:

19.Անվավեր ճանաչել Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու <<Թումանյան համայնքի տարածքում 2013թվականի համար տեղական տուրքեր և վճարներ հաստատելու մասին> >2012թ. նոյեմբերի 19-ի թիվ 40-Ն որոշումը:

20. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014թ. հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ

2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ

3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ

5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ

6. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, 098-04-80-46,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 նոյեմբերի 2013թվականի N 40-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԵՆԹԱԿԱ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16 հոդվածի 19-րդ կետի, 60 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի.

1.Քաղաքապետարանի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող (հաստատվող)փաստաթղթերի համար քաղաքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել
փոխհատուցման վճար՝ հետևյալ չափով՝
1)համայնքի բնակիչ համարվող անձանց աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու,նպաստներ և կենսաթոշակներ,քաղաքացիների բանկային ավանդներ ու փոստային առաքումներ (այդ թվում՝դրամական և ծանրոցային)ստանալու լիազորագիր հաստատելու համար՝500 դրամ,
2)համայնքի բնակիչ համարվող անձանց տրվող բնութագրերի և երաշխավորագրերի համար՝ 500 դրամ,
3)տեղեկանքների դիմաց գանձվող վճարի չափ սահմանելու՝ 200 դրամ,
4)տեղեկանքների դիմաց, որոնք վճարվում են անասունների առք ու վաճառքի համար սահմանել՝ 500 դրամ:

2. <<Թումանյան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ կողմից ծնողական վճարի չափ սահմանել՝ 3500 դրամ:
3. <<Թումանյան քաղաքի մանկական արվեստի դպրոց>> ՀՈԱԿ վարձավճարների չափ սահմանել՝ 2500 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ
6. ՌԱՄԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՁԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, 098-04-80-46,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 նոյեմբերի 2013թվականի N 41

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16 հոդվածի 1-ին մասին 29-րդ կետով.

Հաստատել Թումանյան համայնքի սեփականության 2013թ. գույքագրման փաստաթղթերը

1.Գույքի 63616.8 հազար դրամ ընդհանուր արժեքով, որից՝

1)հիմնական միջոցներ՝ 53459.8 հազար դրամ

2)այլ շինություններ՝ 2857.7 քմ

3)պաշարներ՝ 10267.9 հազար դրամ

4)դուրսգրված գույք՝ 111.0 հազար դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ
6. ՌԱՄԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2013Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հ/Հ	Օբյեկտի անվանումը	քանակը	Հիմնական միջոցներ դրամ	Պաշարներ դրամ	Ընդամենը դրամ	Դուրս գրվ գույք դրամ	Մնացորդը դրամ	Ծանոթություն
	2	3	4	5	6	7	8	9
1	Քաղաքապետարան	1	45682944	1577913	47260857	111000	47149857	
2	Մ/մանկապարտեզ	1	4406566	304881	4711447	_	4711447	
3	Արվեստի դպրոց	1	3370342	8385129	11755471	_	11755471	
4	Այլ շինություններ	55						2857.7 քմ
	ԸՆԴԱՄԵՆԸ	3	53459852	10267923	63727775	111000	63616775	2857.7 քմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՋԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, 098-04-80-46,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 նոյեմբերի 2013թվականի N 42-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու 2012թ. դեկտեմբերի 17-ի <<Թումանյան համայնքի 2013թ. բյուջեն հաստատելու մասին>> թիվ 43-Ն որոշումը և Թումանյան քաղաքի բնակիչներ Լևոն Դուռնոյանի, Անահիտ Սիմոնյանի, Լարիսա Հովհաննիսյանի, Էմմա Առաքելյանի և Ռուբեն Մանուկյանի դիմումները.

1.Թումանյանի քաղաքապետարանի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729/ Թումանյան քաղաքի ստորև բերված անապահով բնակիչներին տրամադրել դրամական օգնություն.

1)Դուռնոյան Լևոն - 30000 դրամ

2)Սիմոնյան Անահիտ - 30000 դրամ

3)Հովհաննիսյան Լարիսա - 30000 դրամ

4)Առաքելյան Էմմա - 30000 դրամ

5)Մանուկյան Ռուբեն - 30000 դրամ

2.Թումանյանի քաղաքապետարանի գանձապահ Հերմինե Հովսեփյանին լիազորել՝ Ալավերդու ՏԳԲ-ից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ
6. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ